Վահագն Հակոբյան

ՌՍԴԲԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԽՆԴԻՐԸ ԲՈՒՆԴԻ* ԵՎ ՍԴԲՀԿ-Ի** ՀԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կազմակերպան կառուցվածք, սոցիալ-դեմոկրատական, սպեցիֆիկներ, Բունդ, հայ բոլշևիկներ, համադաշնային, դաշնային, ինքնավար, նախագիծ

Մարքսիզմի և սոցիալ-դեմոկրատական շարժման տարածման աշխարհագրության ընդլայնմանը զուգահեռ ավելանում էին նաև դրանց ընկալման ու մեկնաբանության ձևերը: Տարբեր պետությունների և էթնիկ հանրությունների միջավայրում մարքսիստները, սոցիալ-դեմոկրատները փորձում էին գտնել սեփական արժեքների, շահերի, խնդիրների և մարքսիզմի ու սոցիալ-դեմոկրատական շարժման գաղափարների ու մոտեցումների համադրության ձևեր: Արդյունքում ստեղծվում էին տարբեր տեսակի և երանգավորման մարքսիստական ու սոցիալ-դեմոկրատական խմբակներ, կազմակերպություններ, կուսակցություններ:

Նշված գաղափարների, շարժման և ազգային ու պետական շահերի, արժեքների համադրության ձգտումը նրանց ստիպում էր առաջ քաշել կազմակերպական տարատեսակ սկզբունքներ: Ինչպես ազգային, այնպես էլ կազմակերպական կառուցվածքի խնդիրը մեծ տեղ էր զբաղեցնում հատկապես բազմէթնիկ պետությունների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կյանքում, ինչպիսին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն էր: Վերջինիս գոյության համենայն դեպս առաջին փուլում կուսակցության կազմակերպական կառուցվածքի խնդիրը բավականին կարևոր տեղ էր գրավում: Ռուսաստանի տարբեր ազգերի պատկանող և տարբեր արժեհամակարգեր կրող ու շահեր ներկայացնող սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ պայքարում էին ՌՍԴԲԿ ներսում իրենց արժանի տեղը զբաղեցնելու համար: Առաջին հայացքից ներքին կազմակերպական բնույթ ունեցող այդ խնդիրը զուգորդվում էր ազգային խնդրի հետ և արտահայտում խորքային նշանակություն ունեցող տարբեր ազգերի քաղաքական կազմակերպման տվյալ ժամանակաշրջանի վիճակը, աստիճանը, ձգտումներն ու հավակնությունները:

20-րդ դարի սկզբին մեր իրականության մեջ ՌՍԴԲԿ կազմակերպական կառուցվածքի խնդրի վերաբերյալ հայ բոլշևիկների, մենշևիկների, սպեցիֆիկների[1***] դիրքորոշումը բխում, արտացոլում էր նրանց անդամների կրթությունը, դաստի-

---

* Խոսքը 1897 թ.սեպտեմբերին Վիլնոյում (Վիլնյուս) ստեղծված «Ռուսաստանի, Լիտվայի, Լեհաստանի համընդհանուր հրեական բանվորական միություն» կուսակցության մասին է, որին կարճ կոչում էին Բունդ (եբրայերեն՝ միություն):

** Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն:

*** ՍԴԲՀԿ անդամները այսպես են անվանվել բոլշևիկների կողմից հայ իրականության յուրահատուկ՝ ռուսերեն «специфик» պայմանները հաճախ մատնանշելու համար:

արակությունն ու էթնիկ գիտակցություն: Հայ բոլշևիկներն ու մենշևիկները, լինելով առավել ռուսականացած և ունենալով բավականին թույլ ազգային գիտակցություն, հանդիսանում էին ռուս սոցիալ-դեմոկրատիայի (հայ մենշևիկները ավելի շատ վրացական) շահերի արտահայտիչներն ու պաշտպանները հայկական միջավայրում և ամենևին էլ որոշակիորեն առանձնացված էթնիկ միջավայրի ու կառույցների կարիք չէին զգում: Նրանց փոխարեն սպեցիֆիկները, ավելի շատ էին կարևորում հայ իրականության պայմանները, ազգային լեզուն, արժեքները, առաջարկում ու պաշտպանում էին կազմակերպական կառուցվածքի այնպիսի սկզբունքներ, որոնք հնարավորություն կտային հայերին ՌՍԴԲԿ ներսում ունենալու որոշակի ազգային միջավայր ու կառույցներ: Բնականաբար, այս դիրքորոշումը չէր կարող ընդունելի լինել մարքսիզմի քողի տակ ռուսական շահերը պաշտպանող ու կուսակցության ներսում իշխանության կենտրոնացմանը ձգտող ուժերի և նրանց սպասարկող, ծագումով հայ հնազանդ տարրերի համար: Այս հանգամանքը կարևոր դեր է կատարել նրանց, իսկ հետագայում նաև խորհրդային պատմագրության կողմից ՍԴԲՀԿ-ին քննադատելու, նրա պատմությունը աղավաղելու գործում[1]: Վ. Լենինի և Ի. Ստալինի արտահայտած կարծիքների համաձայն՝ խորհրդային պատմագրությունը քաղաքական-քարոզչական նպատակով ՍԴԲՀԿ-ին մեղադրել է Բունդի դրածոն լինելու, Կովկասում բունդիզմը սնելու, նրա կազմակերպական կառուցվածքի սկզբունքները վերցնելու, ամեն բանում նրան նմանավելու ցանկության և այլնի մեջ[2]:

Սույն հոդվածի նպատակը, պատմական զուգահեռների միջոցով Բունդի և ՍԴԲՀԿ-ի՝ ՌՍԴԲԿ կառուցվածքի խնդրի վերաբերյալ մոտեցումների և կազմակերպական կապերի զարգացման գործընթացների ներկայացումն է:

Աշխարհում կուսակցության կազմակերպական կառուցվածքի դաշնային[3] սկզբունքներ որդեգրած առաջին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն էր, որի փորձը մեծ ազդեցություն է ունեցել թե՛ Բունդի և թե՛ ՍԴԲՀԿ վրա:

Հայտնի է, որ Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Վիեննայի 1897 թ. համագումարի միաձայն ընդունած որոշման հիման վրա կուսակցությունը վերակազմվել է վեց ինքնավար մասի՝ գերմանական, չեխական, լեհական, իտալական, սլովենական, ուկրաինական: Ստեղծվել են կուսակցության ընդհանուր համագումար, գործադիր մարմին և այլ կառույցներ: Կուսակցության առաջնորդ Վ. Ադլերի

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս Վ. Հակոբյան, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և գործունեությունը (1900-1921 թթ.), «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2010, էջ 3, 7-11:

[2] Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու, հ. 47, Ե., 1983, էջ 79-80, Ստալին Ի., Ինչպե՞ս է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը // Ստալին Ի. Վ., Երկեր, հ.1, Ե., 1946, էջ 43-44

[3] Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության 1897 թ. Վիեննայի համագումարի ընդունած կանոնադրության և դրանում հետագայում կատարված փոփոխությունների տեքստերը գտնել չկարողանալու պատճառով հոդվածում հիմնականում օգտվել ենք Վ. Մեդեմի 1910 թ. հրատարակած «Формы національнаго движенія въ современныхъ государствахъ Австро-Венгрія, Россія, Германія», ժողովածուում տպված ավստրիացի սոցիալ-դեմոկրատ էնգելբերտ Պերներշթորֆերի հոդվածից:

կարծիքով այդ փոփոխությունը նպատակ ուներ ավստրիական բազմալեզու պրոլետարիատին կազմակերպելու համար ստեղծել առավել նպաստավոր պայմաններ և հաղթահարել տարբեր լեզուների գործոնով պայմանավորված դժվարությունները[1]: Շարունակելով սկսած գործը՝ 1899 թ. սեպտեմբերին Չեխիայի Բրյուն քաղաքում կայացած կուսակցության ժողովում ընդունվում է միացյալ կենտրոնական կոմիտեի վերաբերյալ որոշում, ըստ որի՝ նրա կազմի մեջ պետք է մտնեին կուսակցության վեց ազգային կազմակերպությունների գործադիր կոմիտեները, սակայն հաշվի առնելով այն, որ առաձին գործադիր կոմիտեներ գտնվում էին տարբեր քաղաքներում, որոշվում է կենտրոնական կոմիտեում նրանց ներկայացուցչությունը իրականացնել ընտրված հատուկ պատվիրակների միջոցով: Այդ համակուսակցական կենտրոնական կոմիտեի անդամները ընտրվելու էին ազգային կուսակցական ժողովների կողմից և մտնելու համապատասխան գործադիր կոմիտեի կազմի մեջ[2]: Բացի այդ՝ կուսակցական ժողովը որոշում է, որ կուսակցական ընտրական շրջաններում, տեղամասերում առկա բոլոր կազմակերպություններում պետք է ներկայացված լինեն այդտեղ ապրող բոլոր ազգային խմբերի ներկայացուցիչները, որպեսզի քաղաքական կազմակերպման աշխատանքը իրականացվի համատեղ ու միանման[3]:

Այսպիսով՝ վերը ներկայացվածը մեզ հիմք է տալիս պնդելու, որ ապագայում Բունդի և ՍԴԲՀԿ-ի որդեգրած կազմակերպական մի շարք դրույթներ ուղղակի վերցված են ավստրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կանոնադրությունից:

Բունդի պարագայում պայմանները այլ կերպ դասավորվեցին: 1898 թ. մարտին, Մինսկում կայացած ՌՍԴԲԿ առաջին համագումարի որոշման համաձայն, Բունդը ՌՍԴԲԿ կազմի մեջ է մտնում որպես ինքնավար կազմակերպություն՝ ինքնուրույն հատկապես միայն հրեական պրոլետարիատին վերաբերող հարցերում[4]: Այս համագումարից հետո ՌՍԴԲԿ-ի գործունեության, ըստ էության, դադարեցման և դրա փոխարեն Բունդի ուժեղացման պայմաններում վերջինիս Բելոստոկում 1900 թ. մայիսին կայացած 4-րդ համագումարը, անդրադառնալով ՌՍԴԲԿ նկատմամբ վերաբերմունքի հարցին, ցանկություն է հայտնում Բունդի ինքնավար հարաբերությունները փոխարինել դաշնայինով: Համագումարի որոշման մեջ ասվում էր. «ՌՍԴԲԿ-ն պատկերացնելով որպես Ռուսաստանում բնակվող ազգերի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների դաշնային միություն, համագումարը որոշեց, որ Բունդը՝ որպես հրեա պրոլետարիատի ներկայացուցիչ, պետք է կուսակցություն մտնի որպես նրա ֆեդերատիվ մաս»[5]: Բելոստոկի համագումարից հետո «Իսկրա»-ի

---

[1] Пернерсторфер Е., Соціалдемократія и національный вопросЪ въ Австріи // Формы національнаго движенія въ современныхъ государствахъ Австро-Венгрія, Россія, Германія, С.-Петербургъ, 1910, с. 806, 810.

[2] Пернерсторфер Е., указ. соч., с. 812.

[3] Նույն տեղում:

[4] ՍՄԿԿ-ն համագումարների կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, հ. Ա, Ե., 1985, հ. 1, էջ 15 (այսուհետ՝ ՍՄԿԿ-ն ... բանաձևերում և որոշումներում):

[5] Бунд. Документы и материалы. 1894-1921, Москва, 2010, с. 179 (այսուհետև՝ Бунд. Документы и материалы), Панавас Ч., Борьба большевиков против оппортунистической теории и политики Бунда (1903-октябрь 1917 г.), Москва, 1972, с. 10.

կուսակցության ղեկավարման կենտրոնացմանը ձգտող խմբի և Բունդի հարաբերությունները խիստ սրվում են. առաջինները Բունդին սկսում են մեղադրել անջատողականության, բուրժուականության մեջ: Բունդականները դա բացատրում էին իրենց գործունեության տարածքի ընդլայնման և մինչ այդ ռուսաստանյան կոմիտեների մենաշնորհը համարվող մարզեր ներխուժման հանգամանքով[1]:

Իսկրայականների հակազդեցությունը, սակայն, չի կանգնեցնում Բունդին. 1903 թ. Բունդի 5-րդ համագումարի քննարկմանն է ներկայացվում 12 կետից բաղկացած կանոնադրության նախագիծ (մաքսիմում), որը քննարկվելուց և հաստատվելուց հետո պետք է ներկայացվեր ՌՍԴԲԿ 2-րդ համագումարին[2]: Բացի այդ՝ համագումարը

---

[1] «Вестник Бунда», Женева, 1904, N 1-2, январь-февраль, с. 9, հետագայում բունդականների նշված մոտեցումը մենշևիկյան թևի առաջնորդ Յու. Մարտովը բացատրում է հետևյալ կերպ. «Հրեական ազգային հոսանքների դեմ պայքարի և այլ գործոնների տրամադրություններից ծագած բունդականների ինքնավարությունը ֆեդերացիայի փոխելու պահանջը հակադիր էր շարժման կենտրոնացման իսկրայականների ձգտումներին և առաջ բերեց մեծ հակազդեցություն, ինչը և բնական էր: Բանն այն է, որ Բունդը առաջացել էր Լիտվայում, Բելոռուսիայում, Լեհաստանում, որտեղ կենցաղային պայմաններով հրեա բանվորները շատ կտրուկ բաժանված էին լեհական և լիտվացի բանվորներից: Այժմ տարածվելով դեպի հարավ, որտեղ գոնե խոշոր կենտրոններում (Օդեսա, Եկատիրինոսլավ, Նիկոլաև, Կիև, Խարկով, Պոլտավա) հրեա բանվորները՝ հանձինս իրենց ավելի կիրթ շերտերի, զգալիորեն ռուսականացած էին, և այստեղ սոցիալ-դեմոկրատական շարժումը իր առաջին իսկ օրերից ընդհանուր կազմակերպության մեջ միավորում էր թե՛ հրեաներին, թե՛ ռուսներին: Այս պատճառով Բունդի կազմակերպական սկզբունքը կբերեր ոչ միայն տեղական կազմակերպությունների բաժանման, այլև կթուլացներ շարժումը» // տե՛ս Мартов Л., История российской социал-демократии, ч. 1, Петроград-Москва, Книга, 1923, с. 57.

[2] 1. Բունդը կուսակցության (ՌՍԴԲԿ) ֆեդերատիվ մասն է, 2. Բունդը սոցիալ-դեմոկրատական իր գործունեության մեջ որևէ տարածքային շրջանակով չսահմանափակված կազմակերպություն է, որը մտնում է կուսակցության մեջ՝ որպես հրեա պրոլետարիատի միակ ներկայացուցիչ, ընդ որում՝ որևէ տարածքի ամբողջ պրոլետարիատի անունից հանդես գալը այն դեպքերում, երբ այդտեղ գործում է նաև Բունդը, թույլատրելի է միայն վերջինիս մասնակցության դեպքում, 3. Կուսակցության կենտրոնական, արտասահմանյան կոմիտեներում, համագումարներում մասնակցելու համար Բունդը ընտրում է ներկայացուցչություն, որը, որպես այդպիսին, իրավասու է հանդես գալ Բունդի համագումարի իրավասության շրջանակների մեջ մտնող հարցերի կապակցությամբ: Բունդի ներկայացուցչության ձևը պետք է հիմնվի կուսակցության բոլոր մասերի համար միանման սկզբունքների վրա, 4. Բունդի ծրագիրը համակուսակցական ծրագիրն է, որը Ռուսաստանում հրեա պրոլետարիատի հատուկ դրությամբ և հրեա ազգի միջավայրի հասարակական ուժերի փոխհարաբերություններով պայմանավորված հարցերում կարող է լրացվել հատուկ կետերով, որոնք չեն հակասում կուսակցության ծրագրին, 5. Բունդը ունի իր համագումարները, որոնք զբաղվում են հատուկ հրեա պրոլետարիատին վերաբերող հարցերով, կենտրոնական և արտասահմանյան կոմիտեները, 6. Բունդը, ղեկավարվելով կուսակցության ծրագրով, կարող է լուծել այնպիսի հարցեր, որոնց վերաբերյալ կուսակցությունը դեռ որոշում չի կայացրել, այդ որոշումները ժամանակավոր բնույթ ունեն և գործում են մինչև ընդհանուր համագումարի կողմից համապատասխան որոշման ընդունումը, 7. Բունդը իրավունք ունի ազատորեն տնօրինելու իր կազմակերպության գործերը, 8. Բունդը իրավունք ունի առանց խոչընդոտների հրապարակելու գրականություն թե՛ եբրայերեն, թե՛ այլ լեզուներով, Բունդը այլազգի պրոլետարիատին և հակառակը դիմելու դեպքում, պետք է ստանան փոխադարձ թույլտվությունը, իսկ ողջ պետության պրոլետարիատին դիմելու դեպքում՝ կենտկոմինը, 9.ա. Կոնկրետ ձեռնարկներ իրականացնելու համար Բունդը իրավունք ունի ժամանակավոր համաձայնության գալ հեղափոխական կազմակերպությունների հետ, որոնք չեն մտնում կուսակցության կազմի մեջ և այդ կապակցությամբ կուսակցության համագումարի և ԿԿ-ի կողմից սահմանված հատուկ արգելք: Այդպիսի յուրաքանչյուր համաձայնության մասին Բունդի ԿԿ-ն հայտնում է կուսակցության կենտկոմին: բ. Կուսակցության ԿԿ-ի հատուկ թույլտվությամբ Բունդը իրավունք ունի մշտական համաձայնության գալ կուսակցության մեջ չմտնող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ հեղափոխական որոշակի աշխատանքներ

կազմում է նաև վերջնագրային (մինիմում) նախագիծ, որի պայմաններից այն կողմ Բունդի պատվիրակները իրավունք չունեին կատարելու զիջումներ[1]:

Բունդի և ՌՍԴԲԿ 2-րդ համագումարներին ներկայացված մաքսիմում ծրագրերի միջև կային որոշ տարբերություններ, որոնցից ամենաէականը վերաբերում էր առաջին կետին. վերջինում բացակայում էր Բունդին կուսակցության (ՌՍԴԲԿ) դաշնային մասը հայտարարու դրույթը: Այդ սահմանումը տարբերվում էր նաև Բունդի 4-րդ համագումարի որոշման ձևակերպումից, համաձայն որի Բունդը պետք է լիներ ռուսաստանյան դաշնային սկզբունքով (ընդգծումը մերն է – Վ. Հ.) կառուցված կուսակցության դաշնային մասը: Բունդի 5-րդ համագումարը այդ փոփոխությունը կատարում է, որպեսզի այդպիսով չկանխորոշի ամբողջ կուսակցության կազմակերպության հարցը: Ճիշտ է, կուսակցությունը նպատակահարմար էր համարում դաշնային կառուցվածքը, բայց առանձին ազգային խմբերի և կազմակերպությունների հարցի լուծումը պայմանավորում նրանց կոնկրետ պայմաններով[2]: Նշենք նաև, որ մաքսիմում կանոնադրության նախագծի 3-րդ և 8-րդ կետերը արդեն իսկ ենթադրում էին այլ դաշնային մասերի առկայություն[3]: ՌՍԴԲԿ 2-րդ համագումարին ներկայացված նախագծից դուրս էին մնացել մի քանի կետերի առանձին հատվածներ, որոնք ավելի

կատարելու համար: 10. Կուսակցության համագումարը իրավունք ունի չեղյալ հայտարարել Բունդի համագումարի որոշումները՝ բացառությամբ այս սահմանադրության հիմամբ ընդունված որոշումների: Եթե կուսակցության կենտկոմը Բունդի կենտկոմի գործողություններում նկատում է ինչ-որ գործողություններ, որոնք հակասում են կուսակցության համագումարների ընդհանուր որոշումներին, ապա կուսակցության կենտկոմը իրավունք ունի պահանջելու բացատրություն, 11. Կուսակցության կենտկոմը Բունդի մասերի հետ փոխհարաբերությունների մեջ է մտնում վերջինիս կենտկոմի համաձայնությամբ, 12. Վերոնշյալ բոլոր կետերը հիմնական են համարվում և կարող են փոփոխվել, լրացվել ու վերացվել միայն կուսակցության մեջ մտնող մասերի փոխադարձ համաձայնությամբ (տե՛ս Бунд. Документы и материалы, с. 316-318):

[1] 1. Բունդի դրությունը կուսակցությունում որոշվում է հետևյալ կետերով, 2. Բունդը սոցիալ-դեմոկրատական իր գործունեության մեջ որևէ տարածքային /շրջանային/ սահմանափակումներ չունեցող հրեական պրոլետարիատի կազմակերպություն է և կուսակցության մեջ մտնում է որպես նրա միակ ներկայացուցիչ, 3. Կուսակցության կենտրոնական, արտասահմանյան կոմիտեների և համագումարների համար Բունդը ընտրում է իր ներկայացուցիչներին, Բունդի ներկայացուցչության ձևը պետք է հիմնվի կուսակցության բոլոր մասերի համար միանման սկզբունքների վրա: 4. Բունդի ծրագիրը ՌՍԴԲԿ ծրագիրն է, 5. Բունդը ունի իր ԿԿ-ն, արտասահմանյան կոմիտեն և համագումարները, որը որոշում է հատուկ հրեական պրոլետարիատին վերաբերող բոլոր հարցերը, 6. Բունդը ազատորեն տնօրինում է իր կազմակերպության գործերը, 7. Բունդը իրավունք ունի, բացի եբրայերեն գրականություն հրատարակելուց, հրատարակել նաև գրականություն այլ լեզուներով, 8. կուսակցության համագումարը իրավունք ունի չեղյալ հայտարարել Բունդի համագումարի բոլոր որոշումները, 9. Կուսակցության կենտկոմը Բունդի մասերի հետ փոխհարաբերությունների մեջ է մտնում միայն Բունդի կենտկոմի համաձայնությամբ: 10. Բոլոր այս կետերը համարվում են հիմնական և կարող են փոփոխվել, լրացվել ու մերժվել միայն կուսակցության մեջ մտնող մասերի փոխադարձ համաձայնությամբ: Այս տեսանկյունից կուսակցության տեղական և շրջանային կազմակերպությունները չեն համարվում կուսակցության մաս (տե՛ս Бунд. Документы и материалы, с. 332-333):

[2] Бунд. Документы и материалы, с. 331:

[3] Նույն տեղում, էջ 330.

մանրամասնում էին Բունդի և ՌՍԴԲԿ փոխհարաբերություններն ու հստակեցնում իրավասությունների շրջանակները[1]:

Ինչ վերաբերում է Բունդի համագումարի մշակած և ՌՍԴԲԿ 2-րդ համագումարին ներկայացված մինիմում նախագծերի տարբերություններին, ապա երկրորդում բացակայում էր արդեն հիշատակված Բունդի ՌՍԴԲԿ ֆեդերատիվ մասը լինելու դրույթը (1-ին կետ), 9-րդ կետն ամբողջությամբ, 3-րդ կետում հանված էր ՌՍԴԲԿ կենտրոնական, արտասահմանյան կոմիտեներում, համագումարներում կուսակցության բոլոր մասերի համար միասնական սկզբունքով ներկայացուցչություն ընտրելու հատվածը, իսկ 10-րդ կետի (ՌՍԴԲԿ համագումարին ներկայացված նախագծի 9-րդ կետի) ձևակերպումը փոփոխված էր: Նոր ձևակերպման համաձայն՝ Բունդի նախագծի կետերը կարող էին փոփոխվել, լրացվել կամ մերժվել ոչ թե կուսակցության (ՌՍԴԲԿ) մասերի փոխադարձ համաձայնությամբ, ինչը ևս ենթադրում էր ՌՍԴԲԿ ֆեդերատիվ կառուցվածքի առկայություն, այլ նրա համագումարի մասնակիցների 2/3-ի ձայների միջոցով[2]:

ՌՍԴԲԿ 2-րդ համագումարը մերժում է (Յու. Մարտովի որոշման նախագծով) Բունդի պատվիրակության ներկայացրած երկու նախագծերը՝ սահմանելով, որ Բունդը միասնական ՌՍԴԲԿ ինքնավար մասն է, որի ինքնավարության սահմանները պետք է որոշվեն համակուսակցական կանոնադրությունը մշակելիս[3]: Բունդի պատվիրակությունը արդեն քննարկումների ժամանակ հասկանալով, որ իր գոյության համար անհրաժեշտ նվազագույն սկզբունքներն անգամ համագումարը չի պատրաստվում ընդունել, հանդես է գալիս հայտարարությամբ ու հեռանում[4]: Իր հերթին ՌՍԴԲԿ 2-րդ համագումարի «Կուսակցության մեջ Բունդի տեղի մասին» որոշումը, վճռականորեն մերժելով Բունդի ու ՌՍԴԲԿ միջև դաշնային հարաբերությունների հաստատման հնարավորությունը՝ նշում է, որ Բունդը ՌՍԴԲԿ մեջ ունի ինքնավար բաղկացուցիչ մասի կարգավիճակ, որի սահմանները կորոշվեն համակուսակցական կանոնադրության մշակման ժամանակ[5]:

Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը նպաստում է սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների և ազգային կազմակերպությունների մերձեցմանն ու միավորմանը: Դեռևս 1905 թ. դեկտեմբերին ՌՍԴԲԿ-ն Բունդին հրավիրում է մասնակցելու միավորման հարցին նվիրված միջազգային խորհրդաժողովին, սակայն

---

[1] Օրինակ՝ մաքսիմում նախագծի 4-րդ կետում նշվում էր, որ Բունդի ծրագիրը համակուսակցական ծրագիրն է, որը Ռուսաստանում հրեա պրոլետարիատի հատուկ դրությամբ և հրեա ազգի միջավայրի հասարակական ուժերի փոխհարաբերություններով պայմանավորված հարցերում կարող է լրացվել հատուկ կետերով, որոնք չեն հակասում կուսակցության ծրագրին, իսկ նվազագույնում նշվում է, որ Բունդի ծրագիրը համակուսակցական ծրագիրն է կամ 6-րդ կետը նվազագույն նախագծում հանված է, քանի որ 7-րդը, ըստ էության, կարող է ներառել նաև այդ կետում նկարագրվող խնդիրը և այլն: Դրանից բացի՝ այս նախագծում ավելացվել էր երկու ծանոթագրություն:

[2] Второй сьезд РСДРП, протоколы, Москва, 1959, с. 96-97.

[3] ՍՄԿԿ-ն … բանաձևերում և որոշումներում, էջ 86:

[4] ՍՄԿԿ-ն … բանաձևերում և որոշումներում, էջ 100:

[5] Второй сьезд РСДРП, протоколы, с. 428.

ստանալով Բունդի համաձայնությունը՝ այնուհետև ոչ մի քայլ չի ձեռնարկում[1]: 1906 թ. գարնանը Բունդը արդեն հրավեր է ստանում մասնակցելու ՌՍԴԲԿ 4-րդ համագումարին, ինչի կապակցությամբ ապրիլին Բեռնում հրավիրում և անցկացնում է խորհրդաժողով (7-րդ) 2, ուր քննարկում և հաստատում է ՌՍԴԲԿ-ի հետ միավորման վերջնագրային կետերը[3]: Դրանցում Բունդի կատարած ամենաէական զիջումը իր՝ հրեա պրոլետարիատի միակ ներկայացուցիչը ճանաչու դրույթից հրաժարումն էր: Բունդի 7-րդ խորհրդաժողովի ընդունած վերջնագրային կետերը և ՌՍԴԲԿ 2-րդ համագումարին ներկայացված նվազագույն նախագիծը դառնում են 1906 թ. ապրիլին Ստոկհոլմում կայացած ՌՍԴԲԿ 4-րդ համագումարում ՌՍԴԲԿ-ի հետ միավորման* մասին ընդունված պայմանագրի նախագծի հիմքը[4]: Բացի այդ՝ Ստոկհոլմի

---

[1] Кь вопросу обь обьединеніи Бунда сь Россійской Соціал-демократической Рабочей Партіей, извлеченіе изь протоколовь VII конференціу Бунда (заседанія 11,12,13, 14 и 15), С. Петербургь, Туно-Лит 1, 1906, с. 3(այսուհետև՝ Кь вопросу …).

[2] Панавас Ч., указ. соч., с. 34, Шестак Ю., Борьба большевистской партии против национализма и оппортунизма Бунда, М., 1980, с. 52.

[3] 1. Բունդը հրեա պրոլետարիատի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն է, որն իր գործունեության մեջ շրջանային սահմանափակումներ չունի, 2. Բունդը կուսակցության կենտկոմում ունի ներկայացուցչություն, 3. Բունդի կազմակերպությունները համակուսակցական համագումարին և կոնֆերանսին ուղարկում են իրենց ներկայացուցիչներին նույն սկզբունքով, ինչ ՌՍԴԲԿ կազմակերպությունները, 4. Բունդի ծրագիրը ՌՍԴԲԿ ծրագիրն է, բայց ՌՍԴԲԿ-ն ճանաչում է Բունդի իրավունքը՝ պահպանելու Բունդի 6-րդ համագումարի ընդունած ազգային ծրագիրը, 5.Բունդը ինքնուրույնաբար է տնօրինում իր կազմակերպության գործերը, 6.Բոլոր այս կետերը համակուսակցական համագումարի միջոցով կարող են փոփոխվել միայն Բունդի համաձայնության դեպքում // տե՛ս Лэ гпрсп-тф …, т. 1, «Սօցիալիստ», Ժընէվ, 1906, թիվ 20, հունիսի 5, էջ 32-33:

* Նշենք, որ խորհրդային պատմագրությունը հիմնականում փորձել է լռության մատնել բոլշևիկների օգնությամբ Բունդի կուսակցության կազմի մեջ մտնելու հանգամանքը՝ այն քողարկելով Միավորիչ համագումարի կողմից ընդունված հիշատակված բանաձևով և Ս. Շահումյանի բանաձևի նախագծով, այնինչ Բունդի՝ ՌՍԴԲԿ հետ միավորումը տեղի է ունեցել գլխավորապես բոլշևիկների, ինչպես նաև կենտրոնամետների և առավել քիչ խմբակցային մոտեցում ունեցող մենշևիկների ջանքերով // Шестак Ю., указ. соч., с. 53, Бунд. Документы и материалы, с. 12-13.

[4] 1. Բունդը մտնում է ՌՍԴԲԿ կազմի մեջ որպես հրեական պրոլետարիատի՝ իր գործունեությամբ շրջանային (տարածքային) շրջանակով չսահմանափակված սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն, 2. Բունդը ընդունում է ՌՍԴԲԿ ծրագիրը (ծանոթագրություն: Ազգային ծրագրի հարցը մնում է առկախ, քանի որ Միավորիչ համագումարը այն չի քննարկել), 3. Համակուսակցական համագումարի բոլոր որոշումները պարտադիր են Բունդի համար, 4. ՌՍԴԲԿ ընդհանուր որոշումների և կուսակցական կենտկոմի ընդհանուր դիրեկտիվների շրջանակներում Բունդը ինքնուրույնություն է պահպանում ագիտացիայի, կազմակերպման և պրոպագանդայի հարցերում, 5. Բունդն ունի իր տեղական կազմակերպությունները, կենտրոնական հիմնարկություններն ու համագումարները և ինքնուրույն է վարում իր կազմակերպության բոլոր գործերը, 6. ՌՍԴԲԿ կազմի մեջ մտնող բոլոր տեղական կազմակերպությունները ընդհանուր ընտրությունների հիման վրա, առանց կուսակցության անդամների ազգային խտրության կազմում են ՌՍԴԲԿ ղեկավար միասնական համաքաղաքային կոմիտե, Բունդի կազմակերպությունները իրենց ներկայացուցիչներին համակուսակցական համագումարներ և կոնֆերանսներ են ուղարկում ՌՍԴԲԿ-ի մյուս կազմակերպությունների հետ համահավասար հիմունքներով, 8. Բունդն օգտվում է ՌՍԴԲԿ կենտկոմում ներկայացուցչությունների իրավունքից երկու կուսակցությունների կենտկոմների համաձայնությամբ սահմանված եղանակով, միջազգային սոցիալիստական կոնգեսում ՌՍԴԲԿ պատգամավորության կազմում Բունդը ուղարկում

համագումարը Բունդի հետ միավորման վերաբերյալ ընդունում է նաև առանձին բանաձև, որով վճռականորեն դեմ է արտահայտվում պրոլետարիատին՝ ըստ ազգությունների կազմակերպելուն՝ նշելով, որ նախագիծը հաստատել է միայն կազմակերպության երկու սկզբունքի կողմնակիցների պահանջներին ավելի նորմալ բնույթ տալու նպատակով [1]:

Համագումարի կողմից Բունդի ներկայացրած դրույթները կրել էին հետևյալ փոփոխությունները.

1. Բունդի կուսակցության կենտրոնական և արտասահմանյան կոմիտեներում ներկայացուցչություն ընտրելու իրավունքի վերաբերյալ ցուցաբերվել էր ոչ միանշանակ վերաբերմունք. կենտրոնական կոմիտեում Բունդի ներկայացուցչության միջոցը-կարգը սահմանվելու էր վերջինիս և ՌՍԴԲԿ կենտրոնական կոմիտեների համաձայնությամբ, այսինքն, ըստ երևույթին, Բունդին ազատորեն չէր թույլատրվելու ՌՍԴԲԿ կենտկոմում ընտրելու իր ներկայացուցչին, իսկ արտասահմանյան կոմիտեում Բունդի ներկայացուցչության մասին լռություն պահպանելով, թերևս մերժելով՝ նրան միջազգային սոցիալիստական կոնգրեսներին մասնակցելու համար ՌՍԴԲԿ պատվիրակության կազմում ներկայացուցիչ ունենալու իրավունք էր տրվել[2]:
2. Բունդին իրավունք էր տրվում համակուսակցական համագումարների որոշումների, կենտրոնական կոմիտեի դիրեկտիվների սահմաններում ինքնուրույն գործել կազմակերպության, քարոզչության և պրոպագանդայի հարցերում. բունդականների նախագծով ՌՍԴԲԿ կենտկոմի վերադասության մասին ոչ մի խոսք չկար, իսկ համագումարն էլ կարող էր միայն չեղյալ հայտարարել Բունդի համագումարների բոլոր որոշումները (տե՛ս ՌՍԴԲԿ 2-րդ համագումարին Բունդի ներկայացրած նախագծի 8-րդ կետ):
3. ՌՍԴԲԿ համագումարի ընդունած նախագծում ավելացվում է մի կետ, որով ՌՍԴԲԿ բոլոր տեղական կազմակերպությունները (ազգային խառը կազմ ունեցող վայրերում – Վ. Հ.) առանց ազգային խտրության, ընդհանուր ընտրությունների հիման վրա ձևավորելու էին կոմիտե, որը որոշելու էր բոլոր ընդհանուր հարցերը: Այսպիսով՝ հրեաները կզրկվեին երաշխավորված կերպով կոմիտեներում ներկայացուցիչ ունենալու կամ այդ կոմիտեների գործունեության վրա մեծ ազդեցություն ունենալու հնարավորությունից, եթե տվյալ կոնկրետ վայրում մեծամասնություն չկազմեին: Ուշագրավ է,

---

է իր ներկայացուցիչներին // ՍՄԿԿ-ն … բանաձևերում և որոշումներում, էջ 259, Четвертый (Объединительный) съезд РСДРП, апрель (апрель-май) 1906 года, протоколы, Москва, 1959, с. 532.

[1] ՍՄԿԿ-ն … բանաձևերում և որոշումներում, էջ 260, Четвертый (Объединительный) съезд РСДРП, апрель (апрель-май)1906 года, протоколы, с. 533.

[2] Այս կետի իրականացման վերաբերյալ հայտնի է, որ 1907թ. ամռանը Վ. Լենինի մասնակցությամբ կայացած նիստի ընթացքում Երկրորդ սոցիալիստական միջազգայնականի բյուրոյի կողմից ՌՍԴԲԿ-ին հատկացված 10 ձայնը բաժանվում է հետևյալ կերպ՝ $4^1/_2$ բոլշևիկներ, $2^1/_2$ մենշևիկներին և մեկական ձայն Բունդին և Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը, տե՛ս Ленин Владимир Ильич, биографическая хроника, т. 2, 1905-1912, М., 1971, с. 348-349.

որ Բունդի 7-րդ կոնֆերանսում Բունդի ղեկավար գործիչներից Ռաֆայիլ Աբրամովիչը պնդում էր, որ չպետք է թույլ տալ, որ տեղերում միավորումը բերի Բունդի հաստատությունների՝ կոմիտեների, կազմակերպությունների վերացման, այլ տեղերում միավորման հիմքը պետք է լինի դաշնային, սակայն Բունդին չի հաջողվում դա իրականացնել[1]:

4. Համակուսակցական համագումարը չեզոքացնում է նաև Բունդի ազգային-մշակութային ինքնավարության ծրագրի պահպանման իրավունքը՝ նշելով, որ ազգային ծրագրի հարցը մնում է առկախ:

Ընդհանուր առմամբ թեև ՌՍԴԲԿ-ն Բունդին իր կազմի մեջ է ընդունում որպես հրեա պրոլետարիատի իր գործունեության մեջ տարածքային սահմանափակում չունեցող կազմակերպություն, այնուամենայնիվ մնացած պայմաններով բավականին լուրջ լծակներ է ձեռք բերում Բունդի գործունեության վրա ազդելու և նրա տարածական ընդարձակման վերոհիշյալ վտանգը չեզոքացնելու համար: Այս առումով, կարծում ենք, ընդունված նախագծում Բունդը ՌՍԴԲԿ հետ միավորվելու համար շատ ավելի մեծ զիջումների ու զոհուությունների գնաց, քան ՌՍԴԲԿ-ն:

Նշենք, որ 1906 թ. սեպտեմբերին կայացած Բունդի 7-րդ համագումարը, ՌՍԴԲԿ-ի հետ միավորման նախագծի վերաբերյալ արտահայտելով մի շարք դժգոհություններ*, այնուամենայնիվ ընդունում է Միավորիչ համագումարի պայմանները և Բունդի ու ՌՍԴԲԿ-ի միավորումը հայտարարում կայացած[2]:

ՌՍԴԲԿ-ի և Բունդի միավորումը ժամանակավոր բնույթ է կրում, քանի որ սկզբունքային խնդիրը մնում է չլուծված, և երկու կողմն էլ շարունակում են մտածել ապագայում հաղթահարելու մյուս կողմի դիմադրությունը և անցկացնելու իրենց կազմակերպական կառուցվածքի սկզբունքները**:

Եթե ռուսաստանյան Առաջին հեղափոխության ժամանակաշրջանում Բունդը ավելի մերձ էր բոլշևիկներին և հենց նրանց ջանքերով է նորից ընդունվում կուսակցության մեջ, ապա հետհեղափոխական շրջանում մերձենում է մենշևիկների հետ՝ մարտավարական հարցերում հետևելով նրանց[3]: 1918-1919 թվականներին դրսևորած որոշ տատանումներից հետո 1920 թ. ապրիլին Մոսկվայում Բունդի 12-րդ խորհրդաժողովը հայտարարում է, որ Բունդը դուրս է գալիս ՌՍԴԲԿ կազմից,

---

[1] Къ вопросу …, с. 6.

* Բունդի համագումարը ՌՍԴԲԿ 4-րդ համագումարի ընդունած պայմանները համարում է հակասական. Բունդին ընդունելով որպես հրեա բանվորների ներկայացուցիչ՝ ՌՍԴԲԿ-ն մերժում է կուսակցությունը կառուցել ազգային տարանջատման սկզբունքով՝ մնացած ազգային կազմակերպությունների առջև խնդիր դնելով աշխատել ամբողջ պրոլետարիատի մեջ առանց ազգային տարբերության: Բունդը չի կարող ունենալ առանձին ազգային ծրագիր և այլն // Бунд. Документы и материалы, с. 693- 694.

[2] Նույն տեղում, էջ 694:

** Այս մասին են վկայում թե՝ Բունդի 7-րդ համագումարի որոշումներն ու ՌՍԴԲԿ 4-րդ համագումարում Ս. Շահումյանի առաջարկած բանաձևի նախագիծը (տե՛ս Бунд. Документы и материалы, с. 694, ՍՄԿԿ-ն … բանաձևերում և որոշումներում, էջ 245:) և թե՛ հետագա իրադարձությունները:

[3] Бунд. Документы и материалы, с. 13.

հրաժարվում ընդդիմությունից և մտադիր է մտնել Ռուսաստանի կումունիստական (բոլշևիկյան) կուսակցության (ՌԿ(բ)Կ) մեջ[1]: Այս խորհրդաժողովը ՌԿ(բ)Կ-ի հետ միավորումը առաջարկում է իրականացնել այն նույն հիմունքներով, որոնցով Բունդը նախկինում գտնվել է ՌՍԴԲԿ-ի կազմում: Ստոկհոլմի 4-րդ (1906 թ.) համագումարի ընդունած պայմանագրի նմանությամբ կազմված նախագիծը նախատեսում էր Բունդի անվան պահպանում և ՌԿ(բ)Կ մեջ ինքնավար կարգավիճակ, սակայն նախագիծը 1920 թ. հունիսին մերժվում է ՌԿ(բ)Կ, իսկ դեկտեմբերին՝ Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտեի հատուկ հանձնաժողովի կողմից: Այնուհետև Բունդի կենտրոնական կոմիտեն և Մինսկում 1921 թ. մարտին կայացած 13-րդ խորհրդաժողովը հարկադրված համաձայնվում են Կոմունիստական ինտերնացիոնալի որոշման հետ: Դա, ըստ էության, նշանակում էր ինքնալուծարում: Ստեղծված պայմաններում 1921 թ. հունիսին Բունդի կենտկոմը հայտարարում է իր լուծարման մասին[2]: Այս իրադարձություններից հետո արտասահմանում իր գոյությունը շարունակում է միայն Սոցիալ-դեմոկրատական Բունդը, որը կուսակցության նախորդ՝ 12-րդ խորհրդաժողովի որոշմանը անհամաձայնություն հայտնելուց հետո ստեղծել էր Ռ. Աբրամովիչը[3]:

* * *

Այժմ վերոշարադրյալի համատեքստում փորձենք ներկայացնել ՍԴԲՀԿ կազմակերպական կառուցվածքի հարցի վերաբերյալ դիրքորոշման ձևավորման ու զարգացման գործընթացը: ՍԴԲՀԿ-ն իր կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ հայացքները ժառանգել է «Հանդես»-ի խմբից*: Վերջինս, բացի սոցիալիստական գրականության հայերեն թարգմանությունն ու տարածումը, նպատակ ուներ ստեղծելու հայկական սոցիալիստական կուսակցություն ինչպես Կովկասում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, Բուլղարիայում, Եգիպտոսում և Ամերիկայում[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 15.

[2] Бунд. Документы и материалы, с. 14-15, Шестак Ю., ука´з. соч., с. 108..

[3] Бунд. Документы и материалы, с. 13, 15.

* Այն ձևավորվել է 1900 թ. օգոստոսից Ժնևում լույս տեսնող «Հանդես» ամսագրի շուրջ՝ խմբագիր, նախկին հնչակյան գործիչ Երվանդ Պալյանի նախաձեռնությամբ: Շուտով նրա շուրջ են հավաքվել դաշնակցական մի շարք երիտասարդներ՝ Ղազար Տեր-Ղազարյանը, Տիգրան Իսախանյանը, Հովհաննես Յուզբաշյանը, Բախշի Իշխանյանը, ովքեր և դարձել են ՍԴԲՀԿ հիմնադիր անդամները: Թեև «Հանդես»-ի և «Ծրագիր հայ սոցիալ-դեմոկրատ կուսակցության» օրինակներ չեն պահպանվել և նրա շուրջ հավաքված խմբի հայացքների մասին մենք տեղեկանում ենք 1903 թ. Ռուսչուքում Ե. Պալյանի հրատարակած «Հայ սօցիալ-դէմօկրատ միութիւնը եւ իր «Պրօլետարիատ» օրգանը» բրոշյուրից, կարծում ենք, որ նրանց կուսակցության կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ մոտեցումները ձևավորվել են անմիջապես ավստրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մոտեցումների ազդեցությամբ, քանի որ բրոշյուրում խոսվում է Ավստրիայի կուսակցության կազմակերպական կառուցվածքի, 1897 թ. ընդունած որոշման մասին (տե՛ս Ե. Պալեան, նշվ. աշխ., էջ 20) և բացի այդ՝ հիշատակված բրոշյուրում հղումները գլխավորապես կատարված են եվրոպական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ու Երկրորդ միջազգայնականի կոնգրեսների, խորհրդաժողովների որոշումներից:

[4] Պալեան Ե., նշվ. աշխ., 1903, էջ 2:

Խմբի ղեկավար, նախկին հնչակյան Ե. Պալյանի նպատակն էր իր գլխավորությամբ համահայկական բանվորական սոցիալ-դեմոկրատական համադաշնության ստեղծումը, որի մեջ պետք է մտնեին վերոնշյալ երկրների ու տարածաշրջանների հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունները, և որոնցից յուրաքանչյուրը միաժամանակ ֆեդերատիվ սկզբունքով պետք է մտներ համապատասխան երկրի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ[1]: Ըստ Ե. Պալյանի, օրինակ, Կովկասի դեռևս գոյություն չունեցող յուրաքանչյուր ազգային կազմակերպություն պետք է ունենար գյուղական, արվարձանային, քաղաքային, շրջանային կոմիտեներ, կենտրոնական խորհուրդ, վերաքննիչ մարմին, ընդհանուր ժողով, որոնք զբաղվելու էին տեղական հարցերով, իսկ բոլոր ազգությունների ներկայացուցիչների կողմից ընտրված ընդհանուր կենտրոնական խորհուրդը վարելու էր կուսակցության ընդհանուր և խոշոր գործերը[2]: Ե. Պալյանը կարծում էր, որ Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորները պետք է կազմեն միայն մեկ կուսակցություն[3], իսկ Կովկասի յուրաքանչյուր ազգության բանվոր դասակարգ պետք է ունենա առանձին կազմակերպություն՝ տարբերվելով մյուսներից լեզվական, կազմակերպչական ինքնուրույնության և այլ յուրահատուկ պահանջներով[4]: Ըստ նրա՝ մեկ միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն կարող է ձևավորվել այն դեպքում, երբ ազգությունները ստեղծեն ինքնուրույն միություններ և քարոզեն ու գործեն միասնաբար[5]:

Այսպիսով՝ ապագա ՍԴԲՀԿ ակունքներում կանգնած «Հանդես»-ի խումբը ժամանակագրական առումով, Բունդին գրեթե զուգահեռ, ոչ միայն որդեգրել է Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպական կառուցվածքի գաղափարը, այլև փորձել գտնել հայ իրականության մեջ դրա տեղայնացման ձևեր:

ՍԴԲՀԿ-ի ստեղծումը ազդարարած մանիֆեստը հիմնականում պահպանում է «Հանդես»-ի խմբի մոտեցումները: Քննադատելով ՌՍԴԲԿ 2-րդ համագումարի ընտրած կազմակերպական կառուցվածքը՝ այն իրենց հայացքներին ավելի համահունչ է համարում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական (ազգային) կազմակերպությունների դաշնային միությունը[6]: Սպեցիֆիկները մանիֆեստում հայտարարում էին, որ իրենց կազմակերպական հայացքները կիսող բոլոր կազմակերպությունների հետ սերտ կապեր հաստատելով՝ ձգտելու են իրականացնել ՌՍԴԲԿ դաշնային միությունը, իսկ Կովկասյան միությունը վերակազմելու են

---

[1] Նույն տեղում, էջ 12-13:

[2] Պալեան Ե., նշվ. աշխ., էջ 17:

[3] Նույն տեղում, էջ 15:

[4] Նույն տեղում, էջ 17:

[5] Նույն տեղում, էջ 19–20:

[6] Տե՛ս «Вестник Бунда», Женева, 1904, N 3, июнь, с. 16, Ստալին Ի.Վ., նշվ. աշխ., էջ 41, Ավետիսյան Վ., նշվ. աշխ., էջ 489- 490:

ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միության[1]: Մանիֆեստում նկատվող միակ նոր ձևակերպումը ՍԴԲՀԿ-ին հայ պրոլետարիատի շահերի միակ պաշտպան հայտարարելն էր, ինչը թեև բառացիորեն չէր կրկնում Բունդի հայտնի դրույթը* , սակայն իր վրա կրում էր դրա ազդեցությունը: Ընդունելով Բունդի ազդեցության հանգամանքը՝ անհարկի ենք համարում Ի. Ստալինի կողմից ՍԴԲՀԿ-ին հասցեագրված ճշգրտորեն Բունդի կազմակերպական և քաղաքական հայացքները ընդօրինակելու, ամեն բանում նրան նմանվելու վերաբերյալ հեգնական արտահայտությունները[2], քանի որ, ինչպես վերևում նշել ենք, ՍԴԲՀԿ հիմնադիրները կուսակցության դաշնային կառուցվածքի սկզբունքները որդեգրել են Բունդին գրեթե զուգահեռ և պարզ ընդօրինակողներ չեն եղել:

Բնականաբար Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ու Բունդը իրենց մտավոր, մարդկային, նյութական ներուժով, քաղաքական գործունեության մեծ փորձով անհամադրելի են ՍԴԲՀԿ-ի հետ և զարմանալի չէ, որ սպեցիֆիկները ազդվել կամ կարող էին ազդված լինել նրանցից: Այս պարագայում դրականն այն է, որ վերջիններս ոչ թե կուրորեն հետևել են նրանց օրինակին, այլ միշտ փորձել են վերցված գաղափարները, մոտեցումները համեմատել, համադրել և հարմարեցրել հայ իրականության պայմաններին, հայերի ազգային շահերին:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ համաշխարհային մասշտաբով մարքսիզմի և սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ շատ քչերն են աչքի ընկել յուրօրինակությամբ, ստեղծագործական առողջ մտքով. հիմնականում, այսպես կոչված, «տեսաբանների», այդ թվում՝ բոլշևիկյան շատ ղեկավարների համար խորթ չի եղել ընդօրինակման զբաղմունքը և այս առումով տեղին չեն սպեցիֆիկներին ուղղված նման անհարկի արտահայտությունները:

ՍԴԲՀԿ ստեղծումից հետո սպեցիֆիկները հանդես են գալիս բազմաթիվ հրապարակումներով, որոնցում փորձում են հիմնավորել իրենց նախընտրած կազմակերպական սկզբունքների նպատակահարմարությունը[3]: Նրանք կարծում էին, որ իրենց առաջարկած կազմակերպական համակարգը կնպաստի Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային գիտակցության զարգացմանը, հասունացմանը և գոյություն ունեցող կապիտալիստական կարգերի դեմ համատեղ ուժերով տնտեսական ու քաղաքական պայքար մղելուն և այլն[4]:

---

[1] «Вестник Бунда», Женева, 1904, № 3, июнь, с. 16, Ավետիսյան Վ., նշվ. աշխ., 1976, էջ 489-490:

* Խոսքը Բունդի 5-րդ համագումարի մշակած ՌՍԴԲԿ հետ միավորման պայմանների նախագծի 2-րդ կետի մասին է. Բունդը սոցիալ-դեմոկրատական իր գործունեության մեջ որևէ շրջանային սահմանափակումներ չունեցող հրեական պրոլետարիատի կազմակերպություն է և կուսակցության մեջ մտնում է որպես նրա միակ ներկայացուցիչ:

[2] Ստալին Ի.Վ., նշվ. աշխ., էջ 44:

[3] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1435, g. 3, գ. 3, թ. 4, գ. 11, մաս 1-ին, թ. 81, մաս 2-րդ, թ. 277, «Կեանք», «Սօցիալիստ», Ժընէվ, 1905, թիվ 12, հոկտեմբերի 30, էջ 1-3, թիվ 13, նոյեմբերի 14, էջ 3-4, թիվ 14, նոյեմբերի 30, էջ 3, 1906,թիվ 13, հունիսի 10, էջ 199-201, թիվ 14, հունիսի 17, էջ-215-217, թիվ 15, հունիսի 24, էջ 235-238, թիվ 16, հուլիսի 1, էջ 246-249 և այլն:

[4] Սոց.-Դեմոկրատական Բանւորական Հայ Կազմակերպութեան ծրագրի նախագիծը, սիստեմը եւ կանոնադրութիւնը, տպ. կենտրոնական կոմիտէի, Բագու, 1905 (այսուհետ՝ ՍԴԲՀԿ ծրագրի նախագիծը…), էջ 13:

Հայ կազմակերպությունը իր գոյության առաջին տարիներին ներկայացրել է կուսակցության կազմակերպական կառուցվածքի երկու նախագիծ, որոնք միմյանցից տարբերվում են մի շարք կարևոր կետերով:

1905 թ. հոկտեմբերին կայացած ՍԴԲՀԿ 1-ին խորհրդաժողովում ընդունված առաջին նախագիծը[1] սպեցիֆիկները առաջարկում և պաշտպանում են մինչև 1906 թ. կեսերը: Բաղկացած լինելով 13 կետից՝ այն զարգացնում, կոնկրետացնում ու հստակ կերպարանք էր հաղորդում «Հանդես»-ի խմբի և ՍԴԲՀԿ մանիֆեստի առաջադրած կազմակերպական սկզբունքներին: Ըստ այդմ՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը իրենից ներկայացնելու էր ազգային ինքնավար սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միություն, որը պետք է ունենար միևնույն ծրագիրը և կանոնադրությունը: Ազգային կազմակերպություններից յուրաքանչյուրը իր ներքին գործերում լինելու էր ինքնավար և ունենալու էր իր կոմիտեները, կենտրոնական կոմիտեն, պաշտոնաթերթը, դրամարկղը և համագումարը: Միատարր բնակչություն ունեցող բնակավայրերում բոլոր գործերը վարելու և հարցերը լուծելու էր մի կազմակերպություն: Խառը ազգաբնակչություն ունեցող վայրերում ազգային կազմակերպությունների կոմիտեները ընդհանուր խնդիրները (գործադուլ, ցույց և այլն) լուծելու էին իրենց ներկայացուցիչներից կազմված բյուրոյի միջոցով: Կուսակցության բարձրագույն մարմինը հանդիսանալու էր համագումարը, որը կազմվելու էր կենտկոմի բոլոր անդամներից և ազգային ինքնավար սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Կուսակցության կենտկոմը կազմվելու էր ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հավասար թվով ներկայացուցիչներից, և բոլոր հարցերը լուծվելու էին ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ այն կարևոր հարցերի, որոնց լուծման համար նախապես կորոշվեր ձայների 2/3-ը: Կուսակցության կենտկոմը ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ հարաբերությունների մեջ էր մտնելու վերջիններիս կենտկոմի միջոցով և այլն[2]:

Այսպիսով՝ «Հանդես»-ի խմբի և ՍԴԲՀԿ մանիֆեստի օրգանական շարունակությունը հանդիսացող այս նախագիծը թեև գաղափարական տեսանկյունից համապատասխանում էր Բունդի հայացքներին, սակայն ուղղակիորեն որևէ կապ չուներ նրա մշակած և ՌՍԴԲԿ-ին ներկայացրած նախագծերի հետ: Ավելին, այս նախագիծը ՌՍԴԲԿ համար ոչ թե դաշնային կառուցվածք էր առաջարկում, այլ համադաշնային, այնինչ Բունդը ընդամենը մտահոգված էր ՌՍԴԲԿ կազմում իր տեղը որոշելով՝ խուսափելով կախորոշել ամբողջ կուսակցության կազմակերպության հարցը (թեև նպատակահարմար էր համարում դաշնային կառուցվածքը) և

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 13, ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 41, թ. 6-8, գ. 44, թ. 13-15, Проэкть организаціонной системы будущей Россійской Соц.-Дем. Рабочей Партии предлагаемый Армянской Соц.-Дем. рабочей Организаціей, с. 6-8.

[2] ՍԴԲՀԿ ծրագրի նախագիծը…, էջ 13-16:

առանձին ազգային խմբերի և կազմակերպությունների հարցը պայմանավորելով նրանց կոնկրետ պայմաններով[1]:

ՍԴԲՀԿ-ին ներկայացված նախագիծը ՌՍԴԲԿ կողմից ուշադրության չի արժանանում, դրա փոխարեն 1906 թ. ապրիլին մի քանի ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ միավորվում են նրա հետ: Այս գործընթացը խթանիչ դեր է կատարում, և 1906 թ. հունիսին ՍԴԲՀԿ-ն, գումարելով իր 2-րդ խորհրդաժողովը, ընդունում է նախագծի նոր տարբերակ, որի դրույթները գլխավորապես փոխառված էին Բունդի ՌՍԴԲԿ հետ միավորման պայմանների նախագծերից*[2]: Նոր նախագծում սպեցիֆիկները, արդեն սահմանափակելով իրենց հավակնությունները, ՍԴԲՀԿ-ի համար պահանջում էին ներքին գործերում (քարոզչություն, ագիտացիա և կազմակերպություն) ինքնավարություն, իրենց՝ որպես հայ

---

[1] Бунд. Документы и материалы, с. 331.

* Բունդի նախագծից ՍԴԲՀԿ-ինը տարբերվում էր հետևյալով. 1-ին կետում ոչինչ չէր խոսվում ՍԴԲՀԿ տարածքային սահմանափակում չունենալու մասին ու այն հռչակվում էր հայ պրոլետարիատի միակ ներկայացուցիչ, ՍԴԲՀԿ-ն գործունեության տարածքի չսահմանափակման խնդիր չուներ, քանի որ իր գործունեության գլխավոր դաշտը համարում էր Անդրկովկասը, 2-րդ կետում սպեցիֆիկները ժխտում էին ՌՍԴԲԿ ծրագրի ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթը և ցանկանում իրենց վերապահել Անդրկովկասի ու մասնավորապես հայաբնակ վայրերի ագրարային հարցի մշակման իրավունքը, Բունդի՝ ՌՍԴԲԿ հետ միավորման նախագծի 6-րդ կետի իրենց համար խոցելիությունը գիտակցելով՝ սպեցիֆիկները առաջ էին քաշում բազմազգ բնակավայրերում բոլոր ազգերի հավասար թվով ներկայացուցիչներից բյուրո կազմելու մասին կետը (6-րդ) և ՌՍԴԲԿ-ն հայ կուսակցությունների հետ պետք է հարաբերվեր միայն ՍԴԲՀԿ միջոցով, ու նրանք ռուսաստանյան կուսակցության մեջ կարող էին մտնել միայն ՍԴԲՀԿ մեջ նախապես մտնելուց հետո (9-ը և 11-րդ կետեր):

[1] 1. ՍԴԲՀԿ-ն իր ներքին գործերում (պրոպագանդա, ագիտացիա և կազմակերպություն) ինքնավար մի կազմակերպություն է՝ իբրև միակ ներկայացուցիչ հայ պրոլետարիատի, 2. ՍԴԲՀԿ-ն ընդունում է կուսակցության ծրագիրը՝ ա) ժխտելով ազգային ինքնորոշումը, որը կազմում է ՌՍԴԲԿ ծրագրի 9-րդ կետը և բ) վերապահելով իրեն Անդրկովկասի և մասնավորապես հայաբնակ վայրերի ագրարային ծրագրի մշակումը, 3. ՍԴԲՀԿ-ն ունի իր համագումարները, տեղական ու կենտրոնական օրգանը, 4.ՍԴԲՀԿ-ն ունի իր ներկայացուցչությունը կուսակցության համագումարում նույն սկզբունքների հիման վրա, ինչպես և կուսակցության մյուս կազմակերպությունները, 5. ՍԴԲՀԿ-ն ունի իր ներկայացուցչությունը կուսակցության կենտրոնական կոմիտեում, ծանոթագր. Ներկայացուցչության ձևը որոշում են կուսակցության և կազմակերպության կենտրոնական կոմիտեները, 6. Այն տեղերում, որտեղ գոյություն ունեն և այլ կազմակերպությունների կոմիտեներ, գործնական ընդհանուր խնդիրները (օր. գործադուլներ, ցույցեր) վարելու համար, այդ կազմակերպությունների տեղական կոմիտեների հավասար ներկայացուցիչներից կազմվում է մի բյուրո, որին հանձնվում է միջնորդ և վարիչ օրգանի դերը, որի վճիռը պարտադիր է տեղական բոլոր կոմիտեների համար: Հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ, ծանոթ. Այդ բյուրոյի անդամները գտնվում են տեղական կոմիտեների գերիշխանության տակ, յուրաքանչյուր կոմիտե իրավունք ունի ցանկության դեպքում փոխել իր ներկայացուցչին, 7) Կուսակցության համագումարի և կենտրոնական կոմիտեի վճիռները պարտադիր են ՍԴԲՀԿ համար, 8) Կուսակցության կենտրոնական կոմիտեի հարաբերությունները ՍԴԲՀԿ հետ կատարվում են վերջինիս կենտրոնական կոմիտեի միջոցով: 9) Կուսակցությունը հարաբերությունների մեջ կարող է մտնել հայ իրականության մեջ գործող ուրիշ կուսակցությունների հետ միայն ՍԴԲՀԿ միջոցով, իսկ այդ կուսակցություններից և ոչ մեկը չի կարող մտնել ՌՍԴԲԿ մեջ ոչ այլ կերպ, եթե ոչ նախօրոք մտնելով ՍԴԲՀԿ մեջ 10) ՍԴԲՀԿ-ն պահպանում է իր ներկայացուցչությունը միջազգային կոնգրեսներում: 11) Բոլոր միջազգային խորհրդաժողովներում, որտեղ մասնակցում է Ռուսաստանում գործող մի որևէ հայկական կուսակցություն, ՌՍԴԲԿ ներկայացուցչության հետ հավասար իրավունքներով մասնակցում է նաև ՍԴԲՀԿ-ն: // Տե՛ս «Կեանք», 1906, թիվ 15, հունիսի 15, էջ 229–230, ՀԱԱ, ֆ. 1446, ց. 1, գ. 10, թ. 1-2:

պրոլետարիատի միակ ներկայացուցչի դերի ճանաչում, ՌՍԴԲԿ կենտկոմում ու միջազգային կոնգրեսներում իրենց ներկայացուցչությունը ունենալու հնարավորություն և այլն[1]:

Այս նախագիծը ներկայացվում է ՌՍԴԲԿ 5-րդ լոնդոնյան համագումարին (1907 թ. ապրիլ-մայիս)*[1] և նրա կազմակերպական հարցերի հանձնաժողովի կողմից կատարված մի շարք փոփոխություններից հետո, գլխավորապես բոլշևիկների և Բունդի աջակցությամբ, ընդունվում համագումարի կողմից[1]: Վերջինիս ընդունած որոշման մեջ ասվում էր, որ ՍԴԲՀԿ ներկայացրած նախագիծը՝ նրա մեջ հանձնաժողովի մտցրած ուղղումներով, ընդհանուր առմամբ և ամբողջությամբ միավորման համար որպես հիմք ընդունելի է և կենտկոմը պետք է ըստ հնարավորին մոտ ապագայում իրականացնի միավորումը[2]:

Վերոնշյալ հանձնաժողովի կատարած փոփոխությունները վերաբերում էին հետևյալին. 2-րդ կետից հանվել էր ՍԴԲՀԿ համակուսակցական ծրագրի ազգերի ինքնորոշման իրավունքի մերժման մասին դրույթը, 6-րդ (համագումարին ներկայացրած նախագծում 8-րդ)՝ խառը ազգաբնակչություն ունեցող բնակավայրերում ղեկավար մարմինների ստեղծման կարգին վերաբերող կետը վերածևակերպվել էր ՌՍԴԲԿ-ի հետ Բունդի միավորման նախագծի 6-րդ կետի ոգուն համապատասխան, հանվել էին նաև 5-րդ, 8-9-րդ կետերը, ըստ որոնց՝ ՍԴԲՀԿ-ն ՌՍԴԲԿ կենտկոմում պետք է ունենար ներկայացուցիչ և ՌՍԴԲԿ կենտկոմը ՍԴԲՀԿ-ի և հայ իրականությունում գործող այլ կուսակցությունների հետ պետք է շփվեր վերջինիս կենտկոմի միջոցով: Բացի այս՝ կարևոր էր 7-րդ կետում ավելացված այն դրույթը, որի համաձայն՝ ՍԴԲՀԿ-ի համար պետք է պարտադիր լինեին ոչ միայն ՌՍԴԲԿ համագումարի ու կենտկոմի, այլև ՌՍԴԲԿ կովկասյան մարմինների համագումարի և շրջանային կոմիտեի որոշումները, որոնք վերաբերելու էին ամբողջ Անդրկովկասի բանվորներին և այլն[3]:

Այսպիսով՝ չնայած մնացած հարցերում սպեցիֆիկները հիմնականում պահպանում էին առաջին նախագծի դրույթները, այնուամենայնիվ արված

---

* Ի դեպ, ՍԴԲՀԿ կողմից պաշտոնապես հրապարակված (տե՛ս «Կեանք», 1906, թիվ 15, հունիսի 24, էջ 230) և համագումարին ներկայացված նախագծերում (Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, с. 652–653.) որոշ տարբերություններ կան: Մասնավորապես վերջինի 1-ին կետում բացակայում է ՍԴԲՀԿ հայ պրոլետարիատի միակ ներկայացուցիչը լինելու մասին նշումը, իսկ 2-րդում՝ ՌՍԴԲԿ ծրագիրը ընդունվում է բացառությամբ 9-րդ՝ ազգերի ինքնորոշման իրավունքը ճանաչող կետի, այնինչ պաշտոնապես հրապարակված տարբերակում խոսվում է նաև Անդրկովկասի և մասնավորապես հայաբնակ վայրերի ագրարային ծրարի մշակման մասին և այլն:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 20, թ. 1–2, գ. 42, թ. 1-3, գ. 45, թ.40, ֆ. 1446, ց. 1, գ. 10, թ. 2-3, Спиридовичь А.И., Революціонное движеніе вь Россіи, РСДРП, С.-Петербургь, 1914, с. 240, Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, с. 588-589, Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922 гг., Е.,1969, с. 112–113.

[2] Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, с. 589, նաև ՍՄԿԿ-ն…բանաձևերում և որոշումներում, հ. 1, էջ 334, Зиновьев Г., Сочинения (Из истории большевизма), т. 1, Москва-Петроград, 1925, с. 304.

[3] Տե՛ս «Կեանք», 1906, թիվ 15, հունիսի 24, էջ 230, ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 20, թ. 1-2, Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, с. 588–589, Галоян Г., указ. соч., с. 112-113.

փոփոխությունները կարելի է արմատական համարել, քանի որ դրանք էական ազդեցություն էին ունենալու ՍԴԲՀԿ-ի և ՌՍԴԲԿ-ի ապագա փոխհարաբերությունների վրա: Եթե առաջին նախագծում նրանք ՌՍԴԲԿ-ն պատկերացնում էին որպես ազգային ինքնավար կազմակերպությունների համադաշնություն, ապա փոփոխված տարբերակում ընդունում էին կուսակցության դաշնային կառուցվածքի սկզբունքը և ներքին հարցերում իրենց ինքնավարությունը: Եթե առաջին նախագծում սպեցիֆիկները նշում էին, որ կուսակցության կենտկոմը պետք է բաղկացած լիներ ազգային կազմակերպությունների հավասար թվով ներկայացուցիչներից, ապա երկրորդում խոսքը գնում էր ընդամենը կենտկոմում ներկայացուցչություն ունենալու մասին, և այն էլ պարզ չէր, թե այդ ներկայացուցիչը ունենալու էր վճռական ձայնի իրավունք, թե ունենալու էր միայն դիտորդի կարգավիճակ, իսկ ՌՍԴԲԿ համագումարի ընդունած նախագծում զրկվում էր անգամ այդ իրավունքից: Ճիշտ է, սպեցիֆիկների՝ մինչև համագումարը և դրա ընթացքում կատարած զիջումները նպաստում են, որ ՌՍԴԲԿ 5-րդ համագումարը Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը իր կազմում ընդունելու որոշում կայացնի, սակայն բավարար չէին այդ միացումը փաստացի իրագործելու համար:

ՌՍԴԲԿ 5-րդ համագումարում ընդունված պայմանների համաձայն՝ ՍԴԲՀԿ առանց այդ էլ կրճատած պահանջները էլ ավելի են սահմանափակվում, նրա կազմակերպական ինքնուրույնության սահմանները էապես նվազում են: Համեմատած Բունդի ՌՍԴԲԿ-ի հետ միավորման պայմանների՝ սպեցիֆիկներին արգելվում է կուսակցության կենտկոմում ունենալ ներկայացուցչություն, նրանք բացի համակուսակցական ղեկավար մարմինների պետք է ենթարկվեին նաև Կովկասի համագումարի որոշումներին և այլն:

1908 թ. փետրվարին ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների 5-րդ համագումարը, որտեղ բացարձակ մեծամասնություն էին կազմում վրաց մենշևիկները, անընդունելի ու աննպատակահարմար է համարում ՌՍԴԲԿ-ի ու ՍԴԲՀԿ-ի միավորման լոնդոնյան համագումարի ընդունած պայմանների նախագիծը՝ դրա փոխարեն ՍԴԲՀԿ կազմակերպություններին առաջարկելով ձուլվել ՌՍԴԲԿ-ի մեջ և ընդամենը տեղական կազմակերպություններին կից ունենալ հայկական սեկցիաներ[1]: Վերջին անգամ Հայ կազմակերպության հետ միավորման հարցը ՌՍԴԲԿ-ում բարձրացվում է ՌՍԴԲԿ կենտկոմի Փարիզյան պլենումում (1908 թ. դեկտեմբերի 21, 27-29, (ն. տ.1909 թ. հունվարի 3, 9-11)), որը «Կովկասյան կազմակերպությունների մարզային կոմիտեի ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, որ անհրաժեշտ է ըստ հնարավորին մոտ ժամանակում միավորվել հայկական կազմակերպության հետ, որ պետք է անպայման ի կատար ածել, մանավանդ որ Լոնդոնի համագումարից հետո անցել է ավելի քան մեկուկես

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 29, թ. 1, Галоян Г., указ. соч., с. 114.

տարի»[1]: Սակայն այս որոշումը ևս ուշադրության չի արժանանում, և վիժեցվում է ՍԴԲՀԿ ու ՌՍԴԲԿ միավորման գործընթացը:

Ինչ վերաբերում է ՌՍԴԲԿ 5-րդ համագումարում ընդունված միավորման որոշման նկատմամբ ՍԴԲՀԿ-ի դիրքորոշմանը, ապա այդ հարցում միանշանակ պատասխան չունենք: Պատմաբան Գ. Գալոյանը գրում է, որ ՍԴԲՀԿ ղեկավարները, ըստ երևույթին, համագումարից անմիջապես հետո մերժել են այն[2], սակայն փաստերը ցույց են տալիս, որ ՍԴԲՀԿ 1-ին համագումարը (1907 թ., սեպտեմբեր) հանձնարարել է իր կենտրոնական կոմիտեին անհապաղ բանակցության մեջ մտնել ՌՍԴԲԿ կենտկոմի հետ՝ իրականացնելու միություն3: Բոլոր դեպքերում այդ աղքատիկ երկտողը, ոգևորության բացակայությունը խոսում են սպեցիֆիկների ոչ միանշանակ վերաբերմունքի մասին: Դրանից հետո նրանք, ամենայն հավանականությամբ հաշվի առնելով հարցի լուծման համար առկա խոչընդոտների լրջությունը, ՌՍԴԲԿ կովկասյան մարմինների համագումարի առաջարկած նոր պայմանները, ինչպես նաև սկսված հակահեղափոխության շրջանը, իրոք, հրաժարվում են միավորման գաղափարից: Համենայն դեպս, ՍԴԲՀԿ անդամների մեծամասնությունը մերժում է ՌՍԴԲԿ հետ միավորման ներկայացված պայմանները: Եվ այդ պատճառով է նաև, որ նրա մի շարք անդամներ, որոնց համար ընդունելի էին ՌՍԴԲԿ առաջարկած պայմանները, 1910–1911 թվականներին լքում են Հայ կազմակերպությունը և միանում ՌՍԴԲԿ բոլշևիկյան ու մենշևիկյան թևերին: Արդյունքում 1911 թ. երկրորդ կեսին ՍԴԲՀԿ-ն՝ որպես քաղաքական կազմակերպություն, դադարում է գոյություն ունենալ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված բարենպաստ պայմանների ազդեցությամբ ՍԴԲՀԿ-ն նորից վերակենդանանում է: Այս շրջանում նա փորձում է միավորվել ՌՍԴԲԿ մենշևիկյան թևի հետ: Հուլիսին ՍԴԲՀԿ Բաքվի կոմիտեն դիմում է մենշևիկյան կազմակերպությանը ՌՍԴԲԿ-ում Բունդի գտնվելու պայմաններով իրենց կուսակցության մեջ ընդունելու հարցը քննելու առաջարկով[4]: Հուլիսի 14-ին Բաքվի ՌՍԴԲԿ և ՍԴԲՀԿ կոմիտեների համատեղ նիստը, քննարկելով միավորման հարցը, դրական որոշում է կայացնում. ՍԴԲՀԿ Բաքվի կոմիտեն իրավունք է ստանում քարոզելու, կազմակերպելու հայ բանվորներին, հրատարակելու համապատասխան գրականություն, Բաքվի շրջաններում աշխատելու համար նախատեսվում էր ստեղծել ընդհանուր կոմիտեներ և այլն: Միաժամանակ որոշում է կայացվում արագացնել միավորման գործընթացը Անդրկովկասի բոլոր վայրերում[5]: 1917 թ. հոկտեմբերին Թիֆլիսում տեղի ունեցած հայ սոցիալ-դեմոկրատների խորհրդաժողովը որոշում է միավորվել սպեցիֆիկների հետ՝ կոմիտեներին կից ստեղծելով սեկցիաներ:

---

[1] ՍՄԿԿ-ն…բանաձևերում և որոշումներում, հ. 1, էջ 413:

2 Галоян Г., указ. соч., с. 113.

[3] ՀԱԱ, ֆ. 1455, g. 1, գ. 43, թ. 3:

4 «Բանուր», Բագու, 1917, թիվ 13, հուլիսի 9, էջ 4:

[5] Նույնը, թիվ 15, հուլիսի 23, էջ 2:

Հայ կազմակերպության անվան հարցը թողնվում է կուսակցության Անդրկովկասի բոլոր մարմինների համագումարի որոշմանը[1]: Գործադրված ջանքերը արդյունք չեն տալիս, միավորումը չի կայանում մեզ համար անհայտ պատճառներով և հաջորդ տարվա սկզբին ՍԴԲՀԿ-ն նորից հանդես է գալիս որպես ինքնուրույն կազմակերպություն: Կարծում ենք՝ պատճառներից մեկը, եթե ոչ գլխավորը, սպեցիֆիկների կողմից սեկցիաների գաղափարի մերժումն էր:

Հայոց պետականության վերականգումից հետո սպեցիֆիկները կանգնում են ազգային պետականության գաղափարի պաշտպանության դիրքերում: Այս պայմաններում ավելորդ է դառնում համառուսաստանյան կուսակցության հետ միավորվելը, և նրանք, իրենց շուրջ համախմբելով ՌՍԴԲԿ մենշևիկյան թևի հայ որոշ անդամների, 1920 թ. հունվարին ստեղծում են Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՀՍԴԲԿ), որի՝ նույն թվականի մայիսին Ալեքսանդրապոլում կայացած խորհրդաժողովի ընդունած կանոնադրության մեջ նշվում էր, որ ՀՍԴԲԿ-ն անկախ կազմակերպություն է, իբրև ներկայացուցիչը հայ պրոլետարիատի[2]: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1921 թ., ՀՍԴԲԿ-ն հեռանում է պատմական ասպարեզից:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ ենք համարում առանձնացնել հետևյալը.

1. Դարեր շարունակ ու մինչ օրս էլ հայ հասարակական-քաղաքական միտքը ազդվել է արևմտյան, իսկ 19-րդ դարի հատկապես 2-րդ կեսից նաև ռուսական քաղաքական գաղափարներից՝ փորձելով վերցնել, համադրել ու հարմարեցնել դրանք հայ իրականության պայմաններին, օգտագործել ի նպաստ հայերի: Այս առումով, ինչպես մարքսիզմի, սոցիալ-դեմոկրատական շարժման, այնպես էլ Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կառուցվածքի սկզբունքների ներթափանցումը հայկական միջավայր ու փոխառելը հայ սոցիալ-դեմոկրատների կողմից պատահական երևույթներ չեն:
2. ՍԴԲՀԿ կողմից գլխավորապես ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի, իսկ այնուհետև նաև Բունդի կազմակերպական հայացքների, մոտեցումների փոխառությունը չեն կրել արտաքին, արհեստական բնույթ, դրանք յուրացվել են սպեցիֆիկների կողմից, հարմարեցվել և համապատասխանել են հայ իրականության պայմաններին ու պահանջներին, բխել են հայերի շահերից:
3. Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատների միջավայրում ՌՍԴԲԿ-ի կազմակերպական կառուցվածքի խնդիրը միայն արտաքնապես է հետապնդել Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատին ճիշտ սկզբունքներով կազմակերպելու, նրա պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակ, իրականում կազմակերպության խնդիրը տարբեր ազգերի սոցիալ-դեմոկրատների կողմից հիմնականում ընկալվել է որպես միմյանց նկատմամբ ազդեցություն տարածելու, իշխանություն հաստատելու կամ դրանից խուսափելու և ինքնուրույնությունը պահպանելու միջոց:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 65, թ. 1:

[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 2, գ. 12, թ. 9:

4. Մինչև 1906 թ. կեսերը սպեցիֆիկները հիմնականում պահպանել են ՍԴԲՀԿ կորիզը հանդիսացած Հանդեսի խմբի որդեգրած կազմակերպական մոտեցումները՝ պահանջելով ՌՍԴԲԿ-ն կազմակերպել համադաշնային սկզբունքով, այնինչ նույն ժամանակ Բունդը ընդամենը զբաղված է եղել իր տեղը ՌՍԴԲԿ-ի ներսում որոշելու հարցով: Նշված շրջանում Բունդի մոտեցումների ազդեցությունը ՍԴԲՀԿ-ի վրա շատ թույլ է զգացվել: 1906 թ. կեսերից սպեցիֆիկները ՌՍԴԲԿ-ի հետ միավորվելու նպատակով սկսել են օգտագործել Բունդի՝ ՌՍԴԲԿ-ի հետ միավորման պայմանների նախագծերը՝ հակվելով դաշնային կառուցվածքի սկզբունքին:
5. ՍԴԲՀԿ-ի կողմից կատարված զիջումները թեև նպաստել են իրավական տեսանկյունից ՌՍԴԲԿ հետ միավորմանը, սակայն դրա փաստացի և ամբողջական իրականացումը երբեք իրագործել չի հաջողվել, ինչին մի շարք գործոնների հետ մեկտեղ նպաստել է սպեցիֆիկների՝ իրենց մոտեցումներին չդավաճանելու հանգամանքը:
6. Սպեցիֆիկների կազմակերպական մոտեցումները անհետևանք չեն անցնում: 1920-ական թվականներին ՍԴԲՀԿ-ի բովով անցած Խորհրդային Հայաստանի ղեկավար գործիչները (Ալ. Մյասնիկյան, Ս. Սրապիոնյան (Լուկաշին), Աշ. Հովհաննիսյան և այլք) մասամբ դրանց ազդեցությամբ է, որ կարողանում են հարաբերականորեն պահպանել երկրի ինքնուրույնությունը՝ չդառնալով ռուս և վրաց ղեկավար գործիչների ձեռքին ՌՍԴԲԿ-ի բոլշևիկյան թևի հայ հնազանդ տարրերի նման կույր գործիքներ:

Ваагн Акопян, Вопрос структуры РСДРП в контексте организационных связей с Бундом и АСДРО – В статье посредством проведения исторических параллелей представлен процесс развития взглядов Бунда и Армянской социал-демократической рабочей организации (АСДРО) на партийное организационное устройство.
Было показано, что до середины 1906 года Специфики поддерживали подходы ядра АСДРО-группы «Андес», требуя организовать Российскую социал-демократическую рабочую партию (РСДРП) на конфедеративных началах. С середины 1906 года Специфики, с целью объединения с РСДРП, начали использовать условия проектов объединения Бунда с РСДРП, склоняясь к принципу федеральной организационной структуры.

Վահագն Հակոբյան, ՌՍԴԲԿ կառուցվածքի խնդիրը Բունդի և ՍԴԲՀԿ-ի հետ կազմակերպական կապերի համատեքստում – Հոդվածում պատմական զուգահեռներ անցկացնելու միջոցով ներկայացված է Բունդի և ՍԴԲՀԿ կուսակցության կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ հայացքների զարգացման գործընթացը: Ցույց է տրվել, որ մինչև 1906 թ. կեսերը սպեցիֆիկները հիմնականում պահպանել են ՍԴԲՀԿ կորիզը հանդիսացած «Հանդես»-ի խմբի որդեգրած կազմակերպական մոտեցումները՝ պահանջելով ՌՍԴԲԿ-ն կազմակերպել համադաշնային սկզբունքով: 1906 թ. կեսերից սպեցիֆիկները ՌՍԴԲԿ հետ միավորվելու նպատակով սկսել են օգտագործել Բունդի ՌՍԴԲԿ հետ միավորման պայմանների նախագծերը՝ հակվելով դաշնային կառուցվածքի սկզբունքին:

Vahagn Hakobyan, The question of structure of RSDLP in the context of organizational connections with BUND and ASDLO – Through historical parallels the article presents the process of the development of views on organizational structure of Bund and the Armenian Social-Democratic Labour Organization (ASDRO).

It has been shown that up to the middle of 1906 Specifics mainly supported approaches of the core of ASDRA: the group of «Handes» (magazine) demanding to organize the Russian Social-Democratic Labour Party (RSDRP), on confederal basis. From the middle 1906 the Specifics, with the aim of unification with the RSDLP started to use projects of unification witt Bund RSDLP leaning to the principle of federal organizational structure.

Վահագն Հակոբյան – պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ